

մնայ քան թէ օտարի (անուսինների) տղայոց. 30—40 տարի ամուսնութեան օրից անցնելուց և բազմաթիւ որդիք ունենալուց յետոյ էլ կենարատաներաւ Մուշ (սէրը, համակրութիւնը) հէքանց և արեւակցաց կողմն է. այդ յատուկ է այս կողմի հայ և քուրդ իգական սեւերն:

Ժառանգութիւնը օտար սերունդի կանցնի չորս-հինգ միջոցով. երբ օգտինն արու ժառանգ ըմնայ, տնօրէնան կը ժառանգէ աներոջ շարժական և անշարժ գոյքը. եթէ տնօրէնացի կնոջ մէկից անկի քոյքեր լինին, ժառանգութիւնը հաւասարապէս կը բաժնուի անօրէնացի և իւր կնոջ (կրնէ մէկ ժառանգի) և միւս քոյքերու վրայ:

Որդեգրութեան դէպքեր անսնտան չեն, հետեւապէս և այս մասին մի որեւէ սովորութիւն կամ օրէնք մեզ ճանօթ չէ:

Հիւանդութիւնն և գիւղական նաւերը.—Բացի մի քանի համաճարակ հիւանդութիւններից, որոնց գիւղական ժողովուրդը տալ (ցատամ, Լատունայ բարկութիւն) անունը կուտայ, միւս բոլոր հիւանդութեանց համար մէկ մէկից սովորելով և փորձելու վրայ հիմնուելով, զեղ ու դարձան գտած է նա, որոնց մեծը Գրեգոր Երէ անունը կուտանք:

Ճարկից մի մասը, ինչպէս ասինք, ժողովուրդը պատահական բժիշկներից կը սովորի, մի քանիսը նոյն խի կենդանիներից. օրինակ շատ ժողովրդի ականատես եղեր են որ ողնին օժու մի կերտն ժամանակ՝ փութով կը վազէ և Երեմի կամ Եւսի կուլումն բոյսի թուփերը կուտէ, որպէսզի լուսի և յապթի, ինչպէս փորձուած է. և այդպէս, ժողովուրդը վերքի ժաշը և զեղումնի թոյնը թափելու համար թորթիկ կը գործածէ. կարինի խայթուածը առողջացնելու համար խրանգատի (*Verbascum thapsus*) թուփը կը զնէ վերքի վրայ: Չատ նաբերու սիւնը պատահամբ գտած է. այդպէս երբ գիւղացին արաք վաբելու ժամանակ արօրի խոփով գոմէջի օտքը միտաւորէ, խօնցն կը Մի վերքի վրայ և աջող արգիւնք կուեննայ, եթէ մեռքը միտաւորէ, կամ այլան շորի մօրօր և կամ սարդի աստայն կը գործածէ և արգիւնքը զարմեայ աջող կը գտնէ. վերքի ուռոյցը (նախքան պատուանը) շուտով հասցնելու համար տաւարի թրիքը միթով կամ խնորի կտորը խլով շարժելով վրան կը կապեն, վերքից թարսն ջնել տալու համար, եղան լեզու (*plantagomedica*) կամ կաղամբի թուփ կը գործածեն:

Բուսական առաջ գնացած է միւրաբուժութիւնը, որով դարապողները աջողութեամբ մարդոց և անասնոց կտորած ուռք ու մեռքը

կը կոպեն և 10—15 օրէն կառոյցանեն, բացառութիւն կը կազմեն անասուններէց միայն ձիերն ու էշերը որոնք հոգ հոգ կը կոշտին, և ինչպէս փորձը ցոյց տուած է, սոցա կոպած ուփորները չեն կապուեր միւս կենդանիներուն ևս միայն կտրուած թշուառ շատոցացուեր:

Գիւղացիք բացի իրենց սրածալ տներէց ուրիշ բնակարաններ չունին. միայն մեծ տներու փայ երբեմն կը գտնուեն փոքրիկ սենեակներ, որոնք (քրդ.) կը կոշտին ու, նստաբար և երբ մէկը հեւանդանայ, տան մէջ ու սփորաբար թունդի գլուխը կը պարկի Ո՛րքան անտանելի է հիւանդի վիճակը, երբ թունդի ծուխը, կերակուրի հոտը, շարաննէ երեխայոց վտիտոցն ու աղաղակները, ընտանիքի անդադար անց ու զարձը և բարձրաձայն խօսակցութիւնները խճճ տարի անհանգիստ վիճակը աւելի և աւելի կը ծանրացնեն. մանաւանդ եթէ հիւանդութիւնը փարակիչ է և մէկ տան մէջ 10—15 անձինք մէկանց կը պտկին:

Նոր հիւանդացոյցի համար անենից տառը հոգ կը տարուի որ շատ տաք մնայ. այդ նպատակին մեծ ծառայութիւն կը մատուցանէ գիւղական թունդիրը, որ ամէն օր կը փառուի և ամբողջ տունը կը տաքացնէ, հիւանդը այնպէս կը պայկի, որ ունեւոր մինչև թունդիրը հասնեն. փրան կը ձգեն թանձր անկողիններ ու կապերներ, գրլուխը փաթաթելով կը ծածկեն, որպէսզի քրտնի և շատ անգամ քրդ տիւրքի միջոցով հատարակ հիւանդութիւնները կը փնդեն:

Առանց խնայելու լաւն ու փառը, համարեա տիպիկով կառաքարիեն հիւանդին զանազան թաց ու չոր մրգեղէններ, և կը համոզեն որ անպատեառ ուտէ. այս պարագային մաքրելու հոգաւորութիւնը չափազանց է. հիւանդ որչաւ աչքը բացանելու համար չորս կողմը կը զարսնի միդ. կերակուրներ, մածուն, պանիր ևայլն և երբ հիւանդը կարծուած քնից կը գարթի, մէկ առ մէկ կերակուրներու անունները կը համբէ, միդ ցոյց կուտայ և զովելով կուզէ տեսրժառ կը սրել, և նորա տակով եթէ ժիւր լինի և զօռով ուտէ առաջարկած կերակուր կամ միդը, անպատեառ կառոյցանայ:

Հիւանդի մօտիկ ազգականներ ու բարեկամներ, և եթէ ծանօթ անձնաւորութիւն է, գրեթէ բոլոր գիւղացիք, մէկ առ մէկ այցելութեան կերթան. այդ այցելութիւնը պարտաւորութիւն կը համարեն և «մեռ դարտակ» լպէտքէ ներկայանան. սփորաբար թաց ու չոր մրգեղէն կը տարուի և ամէն մէկ այցելուն կաշխատի աչքը բանալ միդ ուտեցնելով:

Պարակիչ հիւանդութիւններէց միայն չափ (տիֆ) կոչուած ցաւից կը վախենան և այս մասին զգուշութիւնը այսքան է, որ հարե-

ւանի տունը երթեկեթիւն չանեն, իսկ եթէ հիւանդութիւնը քի
բնութեան մէջ է, տանեցիք ամենեւին զգուշութիւն չեն բանեցնեն,
և եթէ ցոյց տուաւներ էլ լինին ժարակման գտանգը, կը ծաղրեն
շարին Աստուած զգա (հիւանդը) կը տեսնայ, զմզմի յը տեսնայ,
զրաստիւանը տալով, այդ զատնաւով էլ մինեայ զգալով ու ամա-
նովը կը կերակրեն հիւանդն ու տողջենըրը:

Երկրի մէջ զաւառական բժիշկներ չկան արդէն, ունենալու հա-
մար մտածողն ի՞նչ է. կը մնան արքունի զօրաց զաւանդն ու հեփհեփ
(գիրարոյժ և բժիշկ), որոնք մատչելի չեն ժողովրդին, ասպարէզ կը
մնայ 1) Գաւառ Կարօ, որոնք նման հիւանդութեամբ երբեմն տխրա-
ցեր են և այն ինչ ու այն ինչ նաբերոյք լաւացեր և, խորհուրդ կու-
տան զորմանել այդ նաբերքը. 2) հեփ Գաւառ, որոնք յայտնի են
ժողովրդին իրենց գիտութեամբը. և 3) զաւառի մէջ կամ զուրար
գտնուած նշանաւոր ինքնուս հեփհեփ, որոնց հետ առանձին սակար-
կութիւն կը լինի հիւանդը լաւացնելու համար:

Այս վերջինները հազիւ գրեց կարգալ գիտնն և հին Գաւառ (բը-
ժշկական) ունին, որոնց առաջնորդութեամբ զանազան գեղըուէք
(գեղորայք) կը պարտատեն հարկ եղան ժամանակ գործածելու. նո-
ցա շարժական Գաւառ ընդամէնը քի թեթիւ խաբէն է, ուր զարտաւած
կը լինեն բազմաթիւ խաբէր. զանազան գոյնի մաշամանելով և գեղե-
րով. Ամէն տեսակ հիւանդութիւն բժշկելու ձեռնածուխ կը լինեն,
բայց ինչպէս ասուցումն է. աւելի արդակ են վիրարութեան
հիւանդի մէջ, իսկ ներքին հիւանդութեանց նկատմամբ խելզն են:

Ա. գ յ ի ա ջ ա լ ե ռ.

1. Զիւն. — Թուկոյքի կամ գաւարանի ծխից բռնուած զգիտ
հիւանդութիւնը. զգիտ գիտայ սառ ջուր անելով կամ նախաթին մին
շփելով ցաւը կը հալանեն:

2. Գլխ. իւ թիւէլ. — (սեն սնտիապաշտմանց բաժինը).

3. Գլխ. Լաթ. — Այս ցաւը աչքերը կը միմայնէ, նպուռ կու-
տան, արտրժանը կը կապուի. ա) լաթ. Լաթ. Լաթ. Լաթ. (կարմիր ծաղիկ,
սուս ներկ) և Լաթ. Լաթ. խաւանելով իրարու՝ զգիտ գիտայ կը կապեն.
բ) բաւական քանակութեամբ ալ խաբիկելով տաք բովով հիւանդը
բազանցելուց յետոյ զգիտ գիտայ կը կապեն և կաշխատեն քրտնեցնել
տխրը. գ) նախաթի երկու կողքերին Լաթ. Լաթ. կը կապեն:

4. Լաթ. Լաթ. (լրտածք զգիտ). ա) հիւանդի գլուխը անելով
տաքելով և սաղմով կը լուանան, և նուրի ծաղիկը (*Fussilago far-*

*) Պիւգական Լաթ. է մանրած խնկան և բազի սպա բազարու-
թիւնը, որ Լաթ. Լաթ. գիտայ քաշած կը կապեն քանա տեղաց գիտայ:

հաջ. երեւոյ խիստ կը շինեն և կը քաշեն զլիւս վրայ. կամ յորացնելոյ ու ձանքելոյ քթախոտի հետ քիթը կը քաշեն. բ) Իտիւլ կը լուանան որ նկույի ետը (քորուելը) անցնի, գ) Կինայ շարախը տափրած զլիւս վրայ կը քսեն. զ) Ֆէս զլխարկը այս ցափն մեղմացուցիչ կը համարուի:

5. Գլխո՝ Գլխո՝ Գլխո՝ կամ Բեռ վերջացնելու համար, միայն յորակաքով կը լուանան:

6. Թշուշ (զլխո) — տես սնտոխապաշտամանց բաժինը.

7. Գլխո ից. — ա) Նխախոտի ուշք (Նխամորնի մէջ գոյացած աղտը) Կիթով կեփեն և խոցի վրայ կը կապեն. բ) Խնձորի չիլը կայրեն և մուրը կը քսեն. գ) բարակը խզով կամ թթով եռացնելով կը գործածեն:

8. Կաշի (բրդ. ?) — այս ցաւով կը տկարանան միայն ժանուկները և պատանկները, որոնք սաստիկ և խորը կը հագան, ձայներն կը կարուի, Թաքերը կսփեն Իւտու, շնչարգելութիւն կունենան և աչկն — Կաւնդի հոգեառուներ կը տափրեն, անկիով վերք կը բանան արիւն առնելու համար, և ուշ Գլխո՝ Գլխո՝ կը կապեն վերքի վրայ, արգիւնքը շատ յաջող է:

Բ. Ա յ Բ ա ց ու.

9. Ձեռք. ձեռահարութիւն աչաց. ա) քաթու (հին) հաց կը թրջեն և կակրացնելով կը դնեն աչաց կողմերու վրայ. բ) ձմերկի յորացած կեղևը նոյն կերպ թրջելով կը կապեն. գ) հին արծիւի կաշին նոյնպէս թրջելով կը գործածեն. զ) Երէք տէր կոչուած ուլունքը կը քսեն աչքերուն, կամ ջրի մէջ տրորելով ջուրը կը գործածեն:

10. Կաթիլ (hemero lapie) — հաւու Թաքը երեւոյ շոգին կուտան աչքերու դէմը. տես նաև սնտոխապաշտամանց բաժինը:

11. Պարի. — Կաւրո (նպուռ) տուղ աչաց ցաւը որ բեղհանրապէս տանալ կը տարածուի և վարակիչ է. ա) Ձեռք գեղղիլով կը քաշեն աչքը, ձալեղն է աչքած և մանրած շապի ու հաւկիթի զեղնուցի բազադրութիւնը. բ) Ձեռքէ գործածել. Սա աչապէս կը պատրաստեն. — հաւկիթի աղտակուցը Գլխո Իտիւլ այնքան կը տրորեն որ կը դեղնի, ապա հում շապով հարելով երկու ձաւի կը բաժնուի, ջուր և տիղը. ջուրը կը կաթնեցնեն աչքը, իսկ տիղը կը կապեն աչաց վրայ. գ) Կարմիր սուտ ձաղկը (զեփազդեղ) Թանաք շինելով կանեն աչքը. Երբ նպակոտ աչքը ցուրտ առնէ, որ զիւրացիք կանուանեն (բրդ.) Իտիւլ, զ) Իտիւլ կամ Իտիւլ Գլխո՝ կեղև, կամ Դալի շուշ կը ձիւն աչքերու դէմ. ե) ուռի Թուփ և զաղմ կը կապեն. գ) Գլխո Իտիւլ (բուսական զեղորայք), Իտիւլ (մեխակ), Իտիւլ, Իտիւլ (սև

պղպղեղ), Կոթ շուր (պաղ շաքար) հակթի սպիտակուցով միասին ձուի կնեղի մէջ կանեն, և եփելով շուրը կը կաթեցնեն աչաց մէջ, իսկ սիրովը կը կապեն վրան. է) Ընաղի կարագ կեռացնեն և մէջը պաղ շաքար ու հակթի գեղնուց խառնելով կը լցեն աչքը:

Երբ վերոգրեալ միջոցներով աչաց ցաւը լրուժուի և ժամանակ անցնելով վրան արեւը յաւաք (ցաւը կտրուի, մնայ), աչքացաւը անբուժելի կը համարուի:

բ) Երբ յափազանց արիւն հաւաքուի աչաց մէջ և գեղերով լը-կարողանան վերջացնել, իսկ կոշուած խոտի արմատի կաթը կը կաթեցնեն աչքը, որ սարսափելի աչքոյ զօրութիւն ունի և նոյն բուսկէն թանձրացած արիւնը արտասուախտն կը թափէ ցած:

թ) Զատերը չափով և սառ շաքարով ցաւած աչքի կոպերու տակ կը քերեն:

12. Այս բաւ սպիտակութիւն աչաց բերու վրայ.—ժ) կաթի շուրը կը տանեն դէպի աչքերը, ժա) կնոջ նձի կաթը կանեն. ժբ) Կնոյն իւր նաղիկը չորացնելով և ձանրելով կը փշեն աչքերը), անասնոց քիւստու կ'փշեն), ժգ) ալու լեղի և որցմն (գիվան) խոտի հունդի կաթը միասին կը կաթեցնեն աչքը:

Թի երկտասարց հաղորդեց ինձ հետեւեալ ճարը որ սովորած էր իւր բժիշկ մանկեց.—չիկամորթ օձու սիրա ու թուրը պէտք է վերցնել և տաք տեղ պահել այնքան ժամանակ որ որդնութիւն, ապա աչք որդունքը եփել և շուրը կաթեցնել բաւունեցած աչքի մէջ:

Գ. Ա կ ա ն ջ ա ջ աւ

13. Այսպէս երբ թեթեւ է՝ ա) նոր եփուած հացի բուշոր կը պատանեն և ականջը չոզու գէժ կուտան. բ) ակի կամ սխտորի նիւր ձիթով եփելով ականջի մէջ կը զնեն և ձէթը կը կաթեցնեն. գ) երբ ցաւը բաւական նախ է, շատ գործածուած ձիթամանը լաւ կը տաքացնեն և ականջը զոյու գէժը կուտան. դ) ականջի թարսին ու աղակաթիւնը մաքրելու համար փոքր քան չորը պատրուց անելով մի ծալք կը փառեն և միւս ծալքը ականջը կը զնեն. թիւ ինչ փառելուց յետոյ ամրողը արտեղութիւնը կը հաւաքուի չորի վրայ:

14. Իւրեք.—ականջը երբ խանայ, ա) իւր իւր և մեղրի շանչ եփելով շուրը կը կաթեցնեն. բ) ալու մէջը կանեն ականջը և խրնձորի կաթը կը զնեն վրան:

Դ. Բ ե ռ ա ն ա ջ աւ

15. Պարսկ (պասաւար լինել).—Երկար պաւ պահելուց բերանի մէջ և լնդերու վրայ քնդթուկի նման վէրքեր կ'առաջանան. ա) գաղ-

տիկա (Myosurus minimus) և դադձ կուտեն, կամ նենձնով ջուրը կանեն բերանը, բ) կապուտ շապի փռչին կը ձգեն բերանը:

16. Լպշ.—խարանֆիլ, գեղին կռն և տաք կռն լուծելով և փռչիացնելով կը ցանեն լնդերու վրայ:

Ե. Ե կ ո ա ց աւ

17. ա) Փայտէ գգալի պուր կը տաքացնեն և ակուայի վարի մասը կը խարեն, ապա սխտոր կը ղենեն վրան. բ) երեքակ բանջարը խաշելով կամ ջնջխելով (շարդել) կը ղենեն հիւանդ ակուայի վրայ. գ) խարանֆիլի կտոր կը ղենեն ակուաներու մէջ տեղը. դ) լիմոն աղը պէտք է ջրի մէջ լուծել և ընտիր դաշխասաղը (սախմախ տաշի) կրակի մէջ կարմրացնելով մէջ ձգել և, ճանկել որ շոգին դուրս չենէ, տառերուց յետոյ ցաւած ակուայի վրայ առնելու է. արգիւնքը յաջով է՝ եթէ տառեր փառած կամ որդնէքը չլինի:

18. Ակուաներու որդունքը հանելու համար, կտունեն արուաշբանկի (hyoscyamus niger) հունկը, ձիթով թրջած շորի մէջ կը փաթաթեն, ապա ջրով լիք ամանի բերանին դրած՝ կը փառեն և ծուխը ձագառով գէպի բերանը կը տանեն. ջրի երեսը սպիտակ որդի նման բաներ կընկնեն և կը հաստատեն որ իրաւի որդ է. ձառերը խարքաշումիւն կը համարեն աշս միջոցը. որովհետեւ կարծուած որ գեղը ցիշեալ բոյսի հունկը կը համարուի:

Զ. Կոկորդացաւ և զանազան հիւանդութիւններ.

19. Քնած ժամանակ, պարանոցի՝ բարձի վրայ նուա ընկնելուց կոկորդի ներքի կողմը կուտի և դուրս կուտայ, որը կանաւանեն կռն ընդ.—բուխ կամ ցուցամատը կոկորդն ի վայր տանելով ուսուցը կը տրորեն, հուպ կուտան, կամ բուխ մասը նպելով քիմքը վեր կը բարձրացնեն:

20. Աւշուհ.—ճանք կիտունքը կը կուտի յւշուհ. (տես սնտափաշտամանց բաժինը) երբ կիտունքն ու ճանձոցիկը կամ նման կտոր-դացաները ցոյց արուած միջոցներովը լուսադրանան, ուսուցը շատեալով ցաւ պատճառէ, ա) անթատած ձաղիկը (masalium arenarium) կը նենձն ջրով և դրսու կողմից կը կապեն ուսուցքի վրայ որպէս զի պատուի. բ) տեղորի ձաղիկն ու կոնահաճն խաշխաշը (տերմը) հակիթի զնդնուցով կը հարեն և ուսուցքի վրայ կը կապեն, իսկ վերջնոյս վրայ բամբակ կը ղենեն:

21. Ծեղա.—(կանանց).—կաթի լերդելը (մաճնիկ, թանձրանալ) կանանց նենքու մէջ, որ մեծ ցաւ կը պատճառէ. ա) հիւանդ նիճը ջրով լիք կիտան վրայ ղնելով՝ սանրով նիճը կը սանքեն. բ) աւաղ կը

կապեն ճնի վրայ՝ որ կաթը լուծուի, գ) ալ և կաղամբի թուփ միտաին կը կապեն Եղդիւնքը յաջող է՝ կանանց ասելով:

22. Կաղամբ. — Կաղամբի թանձր թղթի երեսի վրայ բարկ օղի քսելով՝ ժրան կը ցանեն խնկան փռչի, և կը կապեն կոշիկի վրայ որ խիստ կը կպչի և կը մնայ այնքան՝ մինչև որ վերք բանալով ինքն իրեն պրծնայ: Բ) տարթով եռացած ջրով բաղնիք կը դնեն. գ) տանաքի խտոր խաշելով՝ հիւանդը խաշիկի մէջ կը պարկեցնեն և սորա ջրովը կը քրտնեցնեն մի քանի ժամ. դ) կողացաւ երբ թեթեւ է՝ խղով կը մատեն (շփել) կամ փխթ (խափ) կը խաթեն:

Նորածին երեխայոց կողերը նախապէս հաշէկ ասելով կը խաթեն, որ վերջը վերադրեալ կողացաւ չունենան:

23. Փանեղ (փայծաղացաւ). — ա) Երեւով կամ պարզ օրը վարպետը սուր դանակով ձախ կողի տակ՝ ճնի ներքեւ, վերք կը բանայ, ասելի քթով երակը բարձրացնելով արխն կտանէ և բոլորի նրազուն կը կտրէ հանէ. յետոյ սխառ նամելով՝ վերքի բերանը կը դնեն որ չուտով իրար լցայ, մինչև որ ցուր վերջանայ. (արդիւնքը յաջող է ընդհանրապէս). Բ) ցուազար կողը լաւ մատերուց յետոյ, վարպետը բաց ձեռքը մեղրի մէջ թաթախելով կը դնէ ցաւատ տեղաց վրայ և քիչ մնալուց գլխի շփելու ձեռով ձեռքը յետ ու առաջ կը ժաղուրերէ, որպէս զի մեղրը մորթը բարձրացնէ և փայծաղը իւր բնական դիրքը ասնէ:

24. Պոռ բիւլը. — Ծանր առաքիայ վերցնելուց երբ պորտը խախտի և ցու պատնետէ՝ փռած մի նրազ կը դնեն պորտի վրայ և սորա վրայ կը կործեն մի բլիկ (սրուակածն բլղոյ). միջի օդը կանօտարանայ և բլիկը միկուորտի մեջմամբ ժրելով պորտի շրթակոշքը կը փնջէ ու ժով ու պորտը խրքիւրով տեղը կուգայ. յետոյ իւր քսելով կը մատեն:

25. Պէլ բիւլը. — Պոլտակորի խտորերը իւր բնական զգրից, — ծառը տանելով պոչիկի տակը գգուշութեամբ կուգգեն, և իւրաքանչիւր վերցնելուն՝ կարգա իւր քսելով քամակի վրայ՝ կը մատեն ընդ երկար:

26. Պէլի Իմ Գեի (աղեթափութիւն, lieutén). — Զարաթի կուտը և ձաթ անկուայ կուտի վրայ դնելով կը կապեն ձուերու անուկներու վրայ և, երբ նախը նոր է՝ թոյնը կը լուացնէ:

27. Քուլ (միկարգելութիւն). — ա) Երբ միկուկի մէջ քար գոյտնայ՝ ուղղակի ճնելով կը հանեն, Բ) ջերմութեամբ մէջ գոյացած ուլունքանման կոպին քարերը փոշխացնելով ջրով կը խմցնեն. գ) նուա ճեմելով ջուր կը խմեն և տիրոն կուտեն:

28. Կոռ Կոռայի Գեի. — Նորագոտի փեսաները երբ սեռական անկարողութիւն կուտան, որու պատճառը գեղացիք կախարդութեան կուտան և կանուանեն Կոռ, քանդելու համար՝ ընտիր խունկ

պղնձով լիք ջրով կեռացնեն և հրաշէկ զարժած մեծ երկաթ մի (աւորի խոփ Լալն) կամաց կամաց մոցնելով ջրի մէջ շողին կը տանեն փաթաթման շորերու կամ անկողնու միջոցով գէշեմ երկուսարդի աւերքը և շարունակ շփել կը տան փերջինս:

29. Բէլ —յուլ (Gonorrhée *).—ա) Ամենապաւ ճարը կը համարուի ողջ գլուս մի փոշու տակ թաղելով շատ լաւ եփել, մէջը փթալտոյի մէջ անել և հիւանդը բաղանիւք (BAGNE) զրաժ ժամանակ՝ աւերքը դրմի մէջ անցկացնել տալ, մինչև որ աւանդամի կեղտոտութիւնը փոքր գալ թափի. բ) շատ գործածուած հին միթափարջը նոյն կերպ լաւ տաքացնել և նոյն կերպ գործածել, (Գործածողները առաջին նարին հաւանութիւն կուտան):

30. Աֆֆիլիսի գէժ գործածուած նարերը ինձ անշատ են. այսքանս լաւած է՝ որ զեղահատեր (տուլէմանի) կուտան հիւանդին և եւթ կը նստեցնեն:

Ե. Փ ա Ր ա ջ ա լ ե Ր.

31. Խողինճ (Colique).—ամենապարզ միջոցն է մէջքը ջարգել. մնացած նարերու մասին՝ տես սնտրիալաշտամանց բաժինը:

32. Խիթ (սանկերէն՝ տանջու).—ա) Էւթ ջրով արորելով կը խմեն. բ) սխտոր կուտեն. գ) Էւթ արորելով ջրով կը գործածեն. դ) Է— (onopardon acanthium) փշի տերթը կուլ կուտան. ե) զալտիկուռ (Myosurus minimus) խտոր խաշելով ջուրը կը խմեն կամ հում հում կուտեն. զ) —Էւթ թանջարը միթով տապակելով կը գործածեն. է) Էւթ թանջարը նոյն կերպ խզով տապակելով կուտեն:

33. Պալ (փորու).—պնզութիւն. փորու պնզութիւնը քանդելու և բուժում պատճառելու համար ա) հաւու ծնրա ջրով արորելով կը խմեն. բ) այժմ սկսած են Բրէտլ կոչուած մէթը (դղմնու իւղը) խմել՝ որ Բրէտլի մէթի նմանութիւնն ու զօրութիւնն ունի:

34. Մ—յուլ (տաճ).—hemorroïde—թթախտութիւն, տեստետութիւն Լալն.—Մայափիլը երկու տեսակ կը համարուի. ոչ և Է. որմն այն է՝ որ երաստանին պտուկներ զաւրս կուտայ. որը աչքի զեղերով կը խաբեն, և երբ այս միջոցը չգործածեն, կուտատի բաղձը (ծննդած ցօղունը) ծուխ կուտան պտուկներու դէմը, որով կը թարսխակային և շուտով կը պտուռուին. իսկ էզը անպտուկ ցան է, որ արեւահոսութեամբ և պարբերական խիթերով կը շարունակէ տան-

*) Gonorrhée քառով ցոյց տրուած թէլալտոյի ցաւը զուցէ տեսնել է, որը բժիշկները վեներական ցաւը կարգը կը դառնեն. այդ հիւանդութիւն ունեցողները կը նստատան՝ որ թէլալտոյին մրտելոյց տալը կուգայ և սանկերէն էլ կը նշանակէ Ալֆի կոն, Եւթ տանջ:

ջել հիւանդը. երբ տաքերը տառն են շատ մօտ կապն, նարերն են՝ ա) քար կամ աղիւս լաւ կը տաքացնեն և փրան ջուր անելով գոյացած շոգին կը տանեն գէշի նստատեղին. կամ աղիւսի փրան կը նրստան, բ) մաղից պատրաստուած զուլթայ կը հաղնին որ ցաւը փոքրցաւէ ոտները. (քրտինքի միջոցով), գ) բուժիչ յատուկեամբ նշանաւոր՝ Զորտ Լիւն (մշտապալար) բոյսը. որ յինաքինայի նման զառն է, կեփեն և ջուրը կը խմեն. Գործածողները այս խտրի բուժիչ գորութիւնը կը հաստատեն, դ) Սանամարի խտրը նոյն կերպ կը խաշեն, ե) օձու թուր խտրի (sparganium ramazianum) արմատը կը խաշեն և ջուրը կը խմեն, զ) Մարեմուկի (մարեմու) արմատը նոյն կերպ կը գործածեն, է) Անթառամ ճաղկը նոյնպէս, ը) Հաց ու պանիր (խտրի) արմատը չափազանց կեփեն և մէջը բարձր օգի անելով կը խմեն ևսպն, թ) Մալապիս պատնառով երբ նստատեղին քոր զայ, կանափի կանայ թփերը ճննելով զեղաւատի (Հալ) նման ներսը կը տանեն, Իշու և ուզար մէջն ևս ուղտափար կը համարուի, ժ) Լիւանդին Հանգստութիւն պատնառելու համար, թաղիքի կտորը աղաջրով լաւ կեռացնեն և փրան Հակիթի զեղնուց լցնելով տփարը կը նստեցնեն փրան, զեղնուցը ինքն իրան կը քաշաւ ներսը և բաւական կը Հանգստացնէ:

35. Տաք Կոշի.—Մենեղական կանայք երբ մրսեն կամ թթուեղէն ուտելով որովայնի տխրութիւն ունենան՝ ժողովրդական լեզուով կը կոչուի տաք Կոշի.—ա) նոր զենամ ոլլաքի տաք տաք մորթու փայլալէ ցանկելով կը փաթաթեն և կը քրտնացնեն, բ) Հին յարզը խաշելով մէջը մէթ կաննն ու հիւանդը խաշած յարզի մէջ կը պարկեցնեն:

36. Փոքր որդ (նինու).—Երեխայոց փորը երբ ճինու գոյանայ՝ ա) ու կը թրջեն և ժամերով թաղնելուց յետոյ անոթուց կը կերցնեն, բ) Հում Լիւթու կուտեն, գ) Խրտաթ (եղևնահունդ) սև լամիլի հետ ճննելով, առանց նախապէս հոտը քաշելու, թթուած կը կերցնեն.—արդիւնքը յաջող է:

Ը. Ուսաց եւ ձեռաց հիւանդութիւնք.

(կտրուածք, ալլուածք, կտրուածք Կապն).

37. Կտրած ուք ու ձեռք Հեռեւայ կերպով կը կապուի. նախ կտրուած անդամը զգուշութեամբ տաք ջրով և սապոնով կը լուանան. մեղմով թիչ կը մզեն՝ որ ոսկորները իրենց բնական դիրքն առնեն, ապա տաք կոնով և Հակիթի զեղնուցով խարան (նախու) ջիւնելով կտրուկի փայ կը կապեն, յետոյ թաղիքը աղաջրի մէջ լաւ կեռացնեն՝ ու խարանի փայ կը փաթաթեն, իսկ վերջնուց փայ լորս հաս տախտակներ զնելով տուր կը կապեն. կապոցը չքանդուի 10—15 օր՝ մինչև որ ոսկորները կպնեն. Որդիւնքը շատ յաջող է:

Եթէ հոտրածը ծուռ կաշի, կռիւ-տաշ-իւ (այսպէսընդ), որ այդ նպատակով չորացած կը պահուի, փակեացնելով ծուռ կպած ոսկորի վրայ կը կապեն ժամերով, ժուր նախքին հոտրածը կը վերանորոգէ, ոսկորները կը բնկնեն, որ ժամանակ կաշխատեն ուղիղ կապել:

38. Աչու-տի տգի.—աչուածքը երբ թեթեւ է՝ ա) թանաք կը քսեն, բ) իշու արին կը քսեն, գ) հաց ու պանիր, խոտ, զազանի-կուռ, զապճ և խոտ խոտ լաւ կեփեն, աչուածքին կոխու իւղ քսելով զեղն և ա վրան կը կապեն, դ) տորոն և սոխ եփելով կը քաշեն վեր-քի վրայ, ե) երբ վերքը կառնէ մերմակնայ, գալիս և գալիս փո-շխացնելով կը ցանեն վերքին, զ) հակթի դեղնուց, զեղն կոն և կո-փու իւղ ձալած շինելով կը գործածեն: Երբ վերքը ցուրտ առնէ (թա-շանայ), է) թթու պատեղ (փապթեղ) կաթի մէջ կը տորոն, մէջը ձանքած սոխ անելով կեփեն, փան մէթ և այլաք և ա փակեացնեն, դարձնալ կեփեն և կը գործածեն, սորանից յետոյ զազանիկուռ կամ զեղին կոն լաւելով և ձանքելով վերքի վրայ կը ցանեն. վերջի վերջոյ՝ կապուտ շոր զմակն մէջ եռացնելով վերքին կը կապեն:

39. Մրածի աչու-տի.—(նարբ) ա) կառատի փոխինդը կաթով կեփեն, ապա սոխ և քիչ մի իւղ աւելացնելով թեթեւ եփ մ և ա կու-տան և կը քաշեն մրածութիւնից առաջացած աչուածքի վրայ մին-չև 10 ժամ, բ) զազանիկուռ աւելուի թուփ, մնալու պաշար, հաց ու պանիր (խոտը) և սոխ նեմելով իւրով, միմիով և այլով միասին կեփեն և կը գործածեն, գ) խամ հող (արտի) ջրով կեփեն և կը քա-շեն մրածի վերքին, զ) ոլխաքի ալիսակ թուրք համ համ կը կապեն, վերքը չորցնելու համար ե) զազանիկուռ, կամ հինայ կամ՝ զեղին կոն ձանքելով կը ցանեն:

40. Աչու-տի մշտ տե.—Վերքը եթէ թեթեւ է՝ վրան կը զնեն աչու տորոն, գալիս և աչու կակնեցուցիլ նիւթերը, եթէ շատ մեծ է՝ նախ ասեղով կը կարեն, ապա մուշ, շոգ, աչու թուլս կամ շուտ և Գալիս և Գալիս լաւ կը հարեն և կը զնեն վերքի վրայ, այս առաջին զեղը կը կոչուի (բրդ), ա—կամ Գալիս, յետոյ ձալածնելով կառաջացնեն:

41. Վաշ Գալիս Գալիս Գալիս Գալիս Գալիս Գալիս.—ա) միու փաքինի կոչուի մէջ կը նստեցնեն կամ կը պարկեցնեն, բ) նոր գեղած ոլխաքի մորթը տաք-տաք կը փաթաթեն, գ) ջնջիսած հաւ կը կապեն հարած սուսցած անշաքի վրայ:

42. Ջու Գալիս Գալիս.—ա) ծնուք և ալիսի խմոր միասին կը զնեն վերքին, բ) կնոջ շան մաքր կաշին և վերքի վրայ կը ցանեն, գ) կանփետ (կանանփի հունդ) նեմելով կաթով կեփեն և կը քաշեն վերքին, դ) կառատի փոխինդ եփելով կը կապեն վերքին, ապա ջը-ծուք ձանքելով կը ցանեն վրան:

43. Մասներու քցվնալիք (քցիւլ *) տալը.—մարեր. ա) բրան-
դէ (թուջ) մատանիք հանցիացենն մատները. բ) մէզով կը լուանան.
գ) պանքի շու. ջրով կը լուանան և տեղուայ բրդով կը փաթապենն
քնան ժամանակ. դ) ձիթով կը խաբեն.

44. Մաշխալ.—մատներու նայքի ուսիլ և թարախալիլը՝
որ շատ անգամ եղանակները փար կը թափէ. երբ ցաւը նոր է՝ ա) ե-
ռացած կաթի մէջ կը զննեն կամ՝ բ) եղան պինչը կը մայենն մատը
մի քանի րոպէ. գ) ողջ գորտի փորը նեղքելով՝ նոյն կերպ մատի
փայ կը կապեն. երբ կսկսի դեղնել՝ դ) եղաւաշ (խզ և ալիւր) կը
կապեն. ե) այս նարից շեռոյ երբ վերք բացուի, հաւթի դեղնույց
զեղին կան և զմակի խզ մաշած շինելով վերքի փայ կը կապեն.

45. Մաւայր.—Մատի շունչի աստիկ ցաւը. որու աւայր եմէ
շատով շատնուի մատուներները, փար կը թափէ. Մաւայր արովանեա
վերին աստիկանի քար և աջուանք կը պատնաւէ և, աւայր սալի
նման ևս զնդիկի մէտ կերակայ, ա) խկոյն և եթ ոչխարի ալրան
պորտկով (ցած կոր թրեք) կը խաբեն տեղն ու տեղը փնայներու
համար. բ) կամ սեւացած տեղը նեղքելով մազանման մի թել քաշե-
լով կը հանենն. այդ պատճառով գուցէ ցուր կոչուած է Ե—Էր, որ
լրդերէն կը բացապուի դ—Է, Յ) ոմանք ափի մէջ տեղը նեղքելով
կամ մաղը կը քաշեն, կամ եւացած խզով կը խաբեն որ մուծարը ինքն
իրեն փնայայ.

46. Գորտի.—մեքի, տքերու, մատներու՝ երբեմն ևս զլիաւ
փայ բուսած յոր ոստերը կը կոչուեն Գորտի, որոնք վերջացնելու հա-
մար՝ ա) մետաքսէ թելով ամուր կը կապեն. մետաքսը —թել կամայ-
կամայ կը վերջացնէ գորտնուիլը. բ) շուն երբ միգէ՝ հողախառն կառ-
նեն և կը կապեն փրան. տես նաև սնոտխապաշտանց բաժինը.

47. Կծած կամ իծիծ.—ջգուտը և խղարմատ գորտնուիլը, որ
նոյնպէս մետաքսէ թելով կը կապեն. տես նաև սնոտխապաշտանց
բաժինը.

48. Քալիծ.—ուսաց տակը կամ կրնկան փայ գոյցած վերքն
կը կոչուի Քալիծ. (նարեր) ա) թանապուրի երկուսն մաւարը կը կա-
պեն ուսոյցի փայ փափկացնելու համար. բ) գոմշու նոր (տաք) թրի-
քը ձիթախառն կը կապեն փրան. գ) կուպը և զմակ միասին խառնե-
լով կը գործածեն.

Աւհատաբակ ուսոյց, չիթ, քարխէն և այլն հացնելու և պտու-
ռել տալու համար. կտնեն կտուրի մաց, օղի, տապն և մանրած կա-

*) Քչիլ քաղը երկու նշանակութիւն ունի. 1. ժլատ, կծիծ. 2. մառ-
նեկու ծաղը՝ եղանակի շարքը, Ժի տառ (կտք) թաղները, բարակ կաշի աղ-
մակելը.

պար, հաւկթի զեղնացով կը հարեն և կը կապեն ուսուցի փայ, ար-
գիւնքը նշանաւոր է. պատուելոց յետոյ՝ եղան լեզու խտր (planta-
gomedina) կը կապեն վերքի փայ թարախը ծնել տալու համար. եթէ
եղան լեզու չգտնուի՝ կարմրի թուփ կը գործածեն.

49. Իւլի.—Նորածին երեխայոց մարմնոյ, գլխու և կերպարան-
քի փայ դուրս առած կարմիր խոցերը, որոնց արմատը երեւի խոր է,
մեծ ցաւ կը պատճառէ և շատ անգամ մահացու է. (ճարեր). ա) նո-
րածին երեխայն երբ առաջին անգամ կ'աղբէ, այդ աղբը (կղկղանքը)
յորցնելով կը պահեն և լոսելով խոշորուկի փայ կը ցանեն. բ) —ոտ
(կարմրագոյն թթուածնաւ կապարի, rubrum) կը քսեն. գ) կուտատի
փոխինդը կախով շաղախելով կը քսեն. զ) խոտ (մի տեսակ կուպը)
կը քսեն.

50. Մ—լի.—գիւղական միակ նարը ճաղկի դէմ տիշ է (կի-
տաւան, պատուաւան), որ այսպէս կը կատարուի.—ճաղկով հիւանդա-
ցած երեխայի ճաղկի բուշտերից մաս մի կտնեն, տիշը ուզած երե-
խայի մեռքը առջի քթով կը ճակնակեն և, ճաղկի բուշտը լամի հետ
միասին ծննելով վերքի փայ կը դնեն Պէտք է ասել, որ այս պարզ
և գեղեցիկ միջոցը շատ աղոյ արդիւնք կունենայ, բայց գիւղացին
խոր դատապարտելի անհաշուութեամբ ընդհանրապէս զանց կաճէ որ-
խելը, երեխաները մեծ զուկուտան կամ թշուառանան կուրուքեամբ.

51. Ջեւ—լի.—խոշոր զբոյզով ջրայից ճաղխախտը, որ անվնաս
կանցնի, և կաշխատեն միայն տաք պահել հիւանդը.

52. Վարդ— (կարմուկ, scarlatine).—Ճաւայի է յայտնել որ
գիւղացին փարցախտի դէմ պաշտպանուելու միջոցներ ու նարեր չու-
նի. միայն կաշխատեն հիւանդը տաք պահել և, երբ վերքերը կոխեն
թոռմել՝ նոր շիւայով (կարմիր կտու) կը փաթաթեն ական երեխայի
ամբողջ մարմինը.

53. Նիւլի.—Նրեսի, մեռքերու, թեւերու կամ ոտքերու երեսացող
և արմարնող մի. թեթեւ քոր, որ կը քորուի, երբեմն կը ջրջրայ և
լուսնի նոր ու փլի հետ կը նորոգուի ու կը վերջանայ. (ճարեր). ա)
երբ թեթեւ է՝ անօթի ժամանակ ակաւայի կեղտը կը քսեն. բ) կա-
նանօթի ցոգունի և մոշի փայտի մէթը հանելով կը քսեն երեթիկին.

Կանաթի ցոգունը կամ մոշի փայտը փառելով փռած ճաղը կը
զնեն խոցի տմանի փայ և մէթը դուրս կը հանեն.

գ) Ալի— կոչուած միջատը իւրի մէջ ձգելով կը սատակէ. ապա
սատակած միջատն ու իւրը հարելով կը պատրաստեն մպկած, որ կը
քսեն երեթիկին. զ) կը թ.քեն հողի փայ և սխառով արորելով տի-
լը (տիլով, ցեխ) կը գործածեն (տես նաև նախապաշարմանց բաժինը).

54. Մ—լի.—զոռելով կերակուր ուտելու պատճառով մարմնոյ

վրայ բլթակներ դուրս կուգան և խփում էր քարունեւ ձաքերս ւ) խփոյն տան ջրով էր լողացնեն և մաղէ թել փնջան մարմինը էր հօգ (արթել)։ բ) սուար (սուսար) էր քսեն։

55. Գը (քս)։ ձաքերը ւ) անմրեի հեղեղադրով էր լողանան քսասունը։ բ) ցոգուտ (շաղ) կանանչներու մէջ էր թաւալեն։ գ) շաղ և անկուկի արմատը ձենելով միասին էր քսեն։ դ) վառօթ և մէթ շփելով էր քսեն քսակուն և էր նստին արևու զէմ՝ կամ հով—գոլ թունդիրը։ ե) արծիւ խաղ՝ որ վերին աստիճանի աչքով գործութիւն ունի, եփելով էր գործանեն։

56. Խ—հ— (համար—կարմարացտ, éréşirile)։ գլխաւորաբար երեսի և ձեւքերու վրայ կերևայ այս կարմարգոյն ուռցցաւոր ցաւք, որ էր քորուի և տաստիկ կաշի։ (ձաքեր) ւ) տուածուրիկ շնորհք ունեցողը 7 հատ զարհատ ստնելով մէկմէկ էր թափափէ կաթի մէջ և էր դնէ ուռցցը։ բ) ձաւտտի թուփը թրջելով մեղր էր քսեն երեսին և էր կապեն ուռցցի վրայ։

57. Իււր—ւ (օճաղաւ, éréşirile)։ Սա մի վաճաղար հիւանդութիւն է (վէրք), որու մէջ էր կարծուի թէ՛ օճու նման թելիկներ կան։ (ձաքեր) ւ) շան լակոտ ջնջխելով (շարգել) էր կապեն վէրքին։ բ) խուրդ մակը նայնպէս ջնջխելով վէրքի վրայ էր դնեն։ գ) քաղթու հաց թրջելով էր գործանեն։ դ) խաւով մուար (ան. բլղուր) մի թով կեփեն և էր քաշեն վէրքի վրայ։ ե) Խււր—ւն ուլունքը էր դնեն վէրքի մէջ։

58. Աւէի եւլի Իւ քոլ—քըւ։—աւանց հիւանդին իմացնելու՝ շան լակոտ կեփեն և միար էր կերցնեն։ գործածողները այս նաթի օգտաւէտութիւնը էր հաստատեն։ Իսկ բժիշկները շեշտելով էր հաստատեն՝ թէ քոլը բանը զէշ բանով էր վերջանայ։

59. Ք—թ (յողացաւ, քոմաշտաւ) ւ) ողնու միս կուտեն։ բ) ոտտին (ցամաքային) կրիային միար էր գործանեն (ուտել)։ գ) սարի սուխը ձենելով էր տաքցնեն և կովու ձաննով միասին էր քսեն։ դ) արջու հրազուն էր քսեն ցաւտ տեղերը։ միս ուտելն ևս օգտակար էր համարեն։ ե) ոչխարի անկուտը բուրդը էր փաթափեն քամոտ օտք ու ձեւքերուն։ գ) կիր և մատկու կաթ շաղախելով էր քսեն և կամ աւրևու զէմ էր կանգնեն՝ կամ հով գոլ թունդիրը էր մանեն։ է) նաւթիկ (քարիւղ) էր գործանեն։

60. Ալ — Իւ քոլ—քըւ (բոլոր անդամաց յողացաւ, որ մէջքը էր ծռէ և ծնկերը էր թուրացնէ)։ (ձաքեր) ւ) սանամաքի խաղ խաշելով հիւանդը բազանիք (սահա) էր դնեն։ բ) հրաշէկ զարծան երկաթ պղնձով լիք կաթի մէջ կանաց կամաց էր ծոցնեն և շողին էր տանեն հիւանդի անկողնոյ մէջ, և հիւանդը այնպէս էր ծանկեն որ

երբեք ցուրտ չառնէ. դ) տարիք (ոչխարի թրեք) չրով կը խաշեն և տարթախառն բազանիքի մէջ կը գնեն.

61. Տափռչիկ (ցալլ ոչիկ, տան. խրրիս այծաղ) — արտեանուների և ճածուկ մարմնոյ մազոս տեղերը բնակող փոքր ոչիլը, որը հաւանելու համար՝ ժողի և հիւ չաղափնելով շորի մէջ կը փաթաթեն և պարանոցից կը կախեն. ոչիլները կը փախցնեն թէև, բայց զիւրացիք կը հաստատեն որ այս նարը չէժ-Քէն կը պատնասէ.

62. Բէռ-Տ — Ն (պատարի՝ կոկորդի մէջ մնալը) — հրանցը կը պարկեցնեն քամակի վրայ, վարպետը բերանքափը էլը կռնայ հիւանդի երեսին և, բերան բերանի գրած՝ ուժով կը փչէ և պատար կը գլորէ ցած. (փչելու ժամանակ հրանցի պնդներն ու աղանջները կը փակեն).

63. Որպէս զի կերակուրը լաւ մարտի և յթութի փորու մէջ, երեկոցան՝ քնելուց առաջ, մամիկները սառը ջուր կը քսեն երկխաչոյ փորը. եթէ թթութիւն գոյանայ և լուծումն պատճառէ ա) խնձորի չրի մրգաջուրը (խաշալ) կը խնցնեն. բ) թան կամ շլորէ մրգաջուր կը գործածեն. գ) թթու պատեղ (փաթիլ) ջրով օրորելով կը խմեն. Բայց երբ իւղալին կերակուր ուտեն և յկարողանան մարսել, հրանցի ճնկները թուլանան, քուն և թմրութիւն տիրէ փրան, վզի երակները կտկրեն արագ արագ թրթուալ, այդ ցուր կը կոչուի ժողովրդական լեզուով ՏԻԻ.

Տինին վերջացնելու համար՝ վարպետը երկու մեռքով հրանցի պարանոցի թրթուացող երակները՝ նախ կամաց կամաց, ապա ուժով, կտկրէ քամել, տկարի ուշքը կանցնի, սրտունք կուգալ փրան և, երեսին սառը ջուր անելով կ'սթափուի. երեք անգամ կը կրկնեն այս միջոցը և արդիւնքը բնդհանրապէս յաջող է.

Երբ Տինին նախապէս չքժշկուի և ժամանակ անցնի փրան, կը փոխուի Էժ — Էժ (լեքմ, տենդ).

64. Դոզու շորի նարերը. ա) տափրա-թոյի (փսխեցուցիչ փոշի) ջրախառն կը խմեն. փսխելու նպատակով նաև իշխաթուկի կաթիլ կը խմեն, բայց խիստ զգուշութիւն, որովհետեւ լափից առել մահացուցիչ է. բ) ջարգած սխտոր մաճնով կը հարեն և քսելով հրանցի ամբողջ մարմինը՝ հով-գոլ թուռցիկը կը նստեցնեն. գ) երեքնալի տակը պէտք է այնքան փորել, որպէս զի նոր շաղգամի նման կըր արմատը գուրս գալ, որպէս զի խաշեն և ջուրը ստուեցնելով խմեն, դ) Բ-ԷԻ բանջարի կամ Լ-Է-ԷԻ խափ արմատը նոյն կերպ կը խաշեն և ջուրը կը գործածեն (տե՛ս նախապաշարմանց բաժինը).

65. Այ (Հարթույն). (Հարեր) ա) գլուխը տաք ջրով կը լուանան և տաք կը պահեն. պնդներն ևս բաժրակ կը խցեն որ պող աղ ներս չբթնայ. բ) խոտը քս կամ շաքարի փոշի կրակի վրայ գնեղով ծուխը կը տանին գէպի պնդերը (տես նախապաշարմանց բաժինը):

66. Հւ.—ա) տաք կենայ և լու ջրանել. բ) տաք կամ շաղգամ խորովել և վրան տաք դեղ (ճինակ) ցանկելով ուտել. գ) ամենալու ճարը կը համարուի սափեց, ապաքնելով և խոտի գնդիկներով պատ-րաստուած քլուլ (տես կերակուրներ) ապուրը խմել. դ) քա խո, քաշ-ֆե (gindembre—կոնս պղպեղ) և սև պղպեղ թէյ կը շինեն և կը խմեն. ե) մանանիտ հունցը (խարդալ) կնոջ ձնի կաթով խառնած կը խմեն:

Եւթմա—թիւ.—Փանի անգամներ առիթ ունեցանք վիշելու զանազան ուղուքներ՝ որոնց բաժիչ զարմթիւնն ունենալուն ժողովաբար կը հաւա-տայ. որինակ. 1) յնժի, 2) ալը Բուլ, 3) Լեւիւււլ, 4) Դեղնաւի և այլն ու-ղուքներ: Սոցա կարգը դասելու է 5) Դեղնաւի կուտած զանազան մեխ և մեծութեան քարերն ևս, որոնք ժանգի, թաւնաւը խառնու և կերակուր-ներու թոյնը կը թափեն: Բնականից կեռ ու մեռ գնձերով նախշուած՝ մեծ քանակութեամբ քարեր ևս կը զանաւն ժողովրդի մօտ՝ շղեղ (ուղեղ) ա-նանով, որոնք երբեմայց գլխու վրայ կը կարուեն, փան զի, պատակը են կառէ գիւղացին և, ուրիշ քայաարմթիւն չ'աւար. 6) փնշուլ՝ որ բառացի նշանակութեամբ Դեղնաւի կը թարգմանուի (պարսկերէն). քար լի, ալ սոկ-բալին բարդարմթիւն, և մեռք կը բերուի հետեւեայ կերպով:

Իշու, միւլ. և երբեմն ևս ուրիշ անասնոց, մեծաթ տակը ասրեկի մուր լոթի պէնջ յորան կամ շորան (ուտոյց) կը գոյանայ, երբ այս կենդանիք կը ստատին. չորսը նանելով կը լուանան և, երեք տոյս ազգեցութեան տակ, կը պնդի ու կը քարանայ, այս է փանդաբը, որ երբ մարդ կամ ա-նասուն գնատակար խոտ կամ քանդար կերած ժամանակ գեղուի (թաւնա-ւորուել), ջրի մէջ արթնելով՝ ջուրը կը խցենեն հիւանդին. արգիւնքը աղաղ և մեծնալու փանդաբը իշու մեծաթից մեռք կը բերուի:

Թ. Անասնոց նկամողութիւնք և գիւղական հարեր.

67. Յոյ խոտուլ.—Ճարերը նոյն են՝ ինչ որ վերև վիշուեցաւ ժարոց ոտք ու մեռքը կապելու մասին:

68. Հւ.—ալ.—անասունները՝ փաղ առաւօտ անոթի փորով, շա-ղուտ արօտ արանելով՝ կը փքեն փորու մէջ գաղ գոյանալու համար. (Հարեր). ա) պէտք է արանելուց առաջ շոր չարդ կամ խոտ կերցնել. բ) երբ խոտ ու յարդ չգտնուի՝ փքած անասունի պոչից փունջ մի մաղ աւնելով հացով մխտին կը կերցնեն:

69. Առաւօտ փոքիւլ.—բացի իշուց և միւց, միւս բոլոր կենդա-նիկները զալար աւուլտ ուտելով խիստ կը փքեն և շատ անգամ կը ստատին.—ա) սատը ջրի մէջ ձգելով կենդանին՝ կը փաղեցնեն շա-փաղանց, բ) Նակ փաղ եղէգն կը գնեն փքածի երաստանին, որ գաղը

գուրս փչ. գ) մարդու մէջ և տալոն տրորելով կաննն բերանն ի վալը.

70. Դեղու.—Թուեաւ խոտ արանելուց անասունները երբ գեղորին, տեղեւ քարը (նաե փանգահրը) ջրի մէջ կը տրորեն և կը խմցեն:

71. Ծեծե.—ս.—գոմշեղէնները մրսելով ցուրտ կաննեն և կուեննան ծեծե—կոլուած խիթը. գլխաւոր նշանն այն է՝ որ հիւանդ կենդանին ուրբերով իւր փորը կը տփտփէ (նեննը).—Պոյի տակ մի քանի վալըկեան ժաժելով (շփել) և եւ մի կը կանգնի, որից արիւն կաննեն և ցաւ կանցնի:

72. Բուշե (աղաւաղիկ անասնոց). միակ նարն է՝ յի խմցնել.

73. Լեւ կամ ծաւ.—ոչ միայն գոմշեղէնները, այլև սևաստաւորը, զարմեալ մրսելուց կուեննան լեղուի հիւանդութիւն. նշաններն են՝ աչքերը կուլուս (նարու) կուտան, բերանը կը փակուի, կեր չեն կարող ուտել և կը նհարանան. (նար)—կենդանու լեղուն գուրս հանելով՝ տակը զոյացած սև երակներէց արիւն առնել:

74. Դեղ (հիւանդութիւն բերանի և կնգակներու). նշաններն են՝ բերանը կը փակուի, փրփուր կուտայ, ոտաց կնգակները կը կարմրեն քերտածի նման, վերին աստիճանի բորբոքում (այսել) տեղի կուեննայ և, կենդանիները ոչ կարող կը լինին ուտել և ոչ քայլել. (նարեր).—երբ հիւանդութիւնը բերանն է՝ ժաժիւր և աղ խառնելով իրար կը կերցնեն. իսկ երբ ուրբերն է, ջրերու մէջ կը դառնցնեն:

75. Դեղու ծալ (գլխու ուսոյցք), միակ նարն է՝ խարկ (զաղել):

76. Փռեւի (բէշէպէկ, Թոքախտ ոչխարաց—phtisis des moutons), լոյլիւները կը հաստատեն որ ոչխարները՝ աշուն՝ ջրալին խոտեր և ժամնաւորացէս Փռեւ ուն (Faranacum officinal) ծաղիկը ուտելով այս ցաւը կուեննան, (նար լուկի ժաղգուրդը):

77. Թու (քրդ).—կնքակացաւ ոչխարի. զարման ոչխարաց կրճակները ջուր ծնելով կուսին և կը Թարախակալին. (նար).—ուտած կնգակը կը կտրեն և խեղճ լու փոշիացնելով կը ցանն վէրքի վրայ:

78. Փռեւի (չոզացաւ).—(նար) ա) նաթ, մէթ, կարազ իւղ և այլն, կը քանն կամ բ) շուրջանակի կը զարեն:

79. Զուլաւի.—սեղանաւորներու մէկ կողմը ժաշուելով կը ցանբանայ և միւս կողմը կը մնայ բարձր, այդ անկանաւորութիւնը կանուանեն շաղցաւրել: Դոմշեղէնի և սևաստաւորներու համար նար լիպ, բաց ոչխարներուն՝ երբեմն բարձր մնացած կողմը սուր գրով կը հասարեցնեն:

80. Խեղու ծալ քաւերու.—ամբողջ 4—5 ամիս պարալ մնացող լնանը երբ զարման պէտք եղածից տեղի չարջարեն՝ կը Խեղու. (նար).—ա) տաք ջրով և տալոնով կը լուանան. բ) աղուր կը քանն

և կը մտնեն. գ) խամ հող (արտի հող) հաւկիթի միջուկով միասին կեփեն և տաքտաք կը քաշեն խամցած անդամի վրայ. գ) հաւկիթ և խղ հարկով կը քանեն. ի) խաւս պատրաստելով կը գործածեն *): Ճամբողդութիւնից կամ աշխատելուց խամցած մարդոց ոտք ու մեղքերը զտը կը քանեն և տաք ջրով կը լոյանան:

81. Երբ գոմէշներու կաշին զարնան տեղերէն ալրուի, կառնէն ճարճուի (*cichorium intibus*) խտր կարեն և մուրը (փռշին) կարող խղով միասին կը քանեն ալրուած տեղերը:

82. Ենասնոց վերքերու որդունքը ջնջելու համար ա) կանտոնի փայտի թփերը (ծերես ծառի նմանութեամբ՝ խեղդուկ հոտ ունեցող մացառ) կը նենեն և կը գնեն վերքերու մէջ. բ) Բուռ (բող բոյսի կախիլ, որ խիստ անախորժ հոտ ունի) կը գործածեն. գ) ժանգաւի շաղ մանրելով կը ցանեն. զ) վերքը յորայնելու և միս բերելու համար զգո խտր արմատ փռշիացնելով կը ցանեն:

83. Քիւրճի (հարուխ իշու և ձիւ),—այս կենդանիներու քիւթը կը բռնուի. Թարախանման աղանդութիւն կուզայ ցած և մեծ ներսութիւն կը պատնասէ. ճարն է՝ կտաւատի Բու (ջարդած ուրուկները) ձկնի քիթի գէմ:

84. Պիւ Գու (իշու և ձիւ),—պնկներու վերն՝ կաշու տակը աւելորդ կրնիկ (կակուղ ոսկոր) գոյանայը. ճարն է՝ կաշին կտրել և աւելորդ կրնիկը զուրս հանել:

85. Ար (իշու և ձիւ),—այսց վերին կուպերու ներքե քիւնէ կրնիկներու գոյանայը. ճարն է՝ կտրել հանել:

86. Ար Խալ (ճարեր) ա) հեծնելով ման կանեն. բ) ձխախտի կամ անխտի (*anisum*) ձուխը եղունգով շտ յտ Խու ներս կը տանեն:

*) Գիւղացին խաւսան ալրով կը պատրաստէ. Ձիւ կամ իշու գլխու ամբողջ տեղերէն (գանի, խաւս) մանրելով կը լցնէ մի նոց բերան բոլորի մէջ. այս բոլորը բերանն ի վայր կը գործեն մի ուրիշ ամանի մէջ և երկուքը միասին կը գնեն ցանէ խաւսիկի տակ. փուռը (խաւսիկ) կը զատի և տեղերէն հալելով կը ծարնէ վերնի ամանից ներքին ամանը. այս է գիւղացու խաւսանը՝ որ լոկ է առնաւարակ կուպը (խաւսան) անուանոց նիւթերէց: Ձիւները տեղիք փոխանակ՝ հաւկիթից կը պատրաստեն: